

_____ , 2019թ.

ՀԱՆՐԱԳԻՐ

Եղեգևաձոր համայնքը Էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ

Հարգելի պրն. վարչապետ, ՀՀ կառավարության անդամներ, Եղեգևաձորի քաղաքապետ և ավագանու անդամներ,

Վայոց Ձորի մարզը, լինելով բնակչությամբ ամենափոքրը, Հայաստանի այն յուրահատուկ տարածքներից է, որտեղ միաժամանակ հանդիպում են տափաստանային, անտառային և ալպիական Էկոհամակարգերը, որոնց մի մասն արդեն իսկ ունի հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ: Այս մարզը մեր երկրի հիմնական ջրային հարստությունը՝ Սևանա լիճը սնող ու վերականգնող աղբյուրն է և Հայաստանի ողջ տարածքի համար ունի ջրային ռազմավարական նշանակություն և՛ որպես ջրհավաք ավազան, և՛ ջրային կարևորագույն ենթակառուցվածքներ ունեցող մարզ՝ Արփա և Եղեգիս գետեր, Որոտան-Արփա-Սևան ջրատար թունել, Կեչուտի, Չերիների ջրամբարներ և այլն:

Մեր մարզի տնտեսության հիմքում հողն ու բնությունն են՝ գյուղատնտեսությունը, անասնապահությունը, գյուղվթերքի վերամշակման ձեռնարկությունները, խաղողագործությունը, գինեգործությունը, հանքային և խմելու ջրերի արտադրությունը, (Էկո)տուրիզմը, Էկոլոգիապես մաքուր վայրի դեղաբույսերի հավաքումը, առողջարանները և այլն, որոնք նաև ստեղծել են այնպիսի ապրանքանիշեր՝ բրենդեր, որոնք ներկայացնում են ողջ Հայաստանը:

Եղեգևաձորը Վայոց Ձորի մարզկենտրոնն է և խոշորագույն քաղաքը: Մեր քաղաքում գործում են սննդի և թեթև արդյունաբերական ձեռնարկություններ, քաղաքի տնտեսությունը կապված է նաև Վայոց Ձորի հարևան համայնքներում ծաղկող գինեգործության հետ: Եղեգևաձորում կան նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ, և մենք համարում ենք, որ քաղաքն ապագայում կարող էլ ավելի զարգանալ՝ որպես ուսանողական քաղաք: Մենք մտահոգված ենք Եղեգևաձորին մոտ և Արփա գետի հովտում առաջարկվող հանքարդյունաբերական ծրագրերի հեռանկարով. մասնավորապես խոսքը Գլածորի և Ամուլսարի ծրագրերի մասին է, որոնք սպառնալիք կլինեն մեր քաղաքի բնակչության առողջության համար, ինչպես նաև ընդհանուր առմամբ մարզի տնտեսության և բնական միջավայրի համար: Եղեգևաձորին այսքան մոտ գտնվող և այսքան մեծ ռիսկեր պարունակող ծրագրերի պարագայում մեր մարզի խոշորագույն համայնքը նույնիսկ ազդակիր չի ճանաչվել: Ս.թ. հուլիսին այս մասին ՀՀ Բնապահպանության նախարարություն ուղղված՝ Եղեգևաձորի համայնքապետարանի դիմումն էլ մերժվել է:

Մետաղական հանքարդյունաբերությունը ոչ մի կերպ չի կարող զարգացնել մեր մարզի տնտեսությունը. եթե նույնիսկ այն կարճաժամկետ կտրվածքով ապահովի որոշակի հարկային եկամուտներ, ապա այդ նույն կարճ ժամկետում կազմաքանդելու է արդեն իսկ բնականորեն կազմավորված տնտեսական համակարգը, իսկ հետագայում հանգեցնելու է ահռելի ծախսերի՝ կապված սոցիալական ու բնապահպանական ավերիչ ազդեցության հետ: Իրականում հանքարդյունաբերության վնասների և օգուտների հարաբերակցությունը հաշվարկված չէ, մենք զրկված ենք դրա առաջացրած վնասների մասին վերլուծություններից, սակայն մեր աչքի առջև ունենք Հայաստանի այլ վայրերում հանքարդյունաբերության դառը փորձը: Մենք չենք ցանկանում դառնալ Լոռվա Թեղուտը, Ախթալան, Ալավերդին, Սյունիքում արդեն իսկ դատարկված Դաստակերտը, հիվանդացությամբ Հայաստանում առաջինը համարվող Զաջարանը կամ Կապանը:

Մեզ համար մեծ արժեք են մեր հողը, մեր բնությունը, պատմության ու մշակույթի հուշարձանները, դրանք մեր ինքնության մասն են կազմում: Մենք ցանկանում ենք, որպեսզի մեր սերունդները հարյուրավոր ու հազարավոր տարիներ շարունակեն ապրել այս հողի վրա, լինեն առողջ, և ուստի մեր պարտքն ենք համարում պահպանել այս հողն ու մաքուր ջրերը, որոնք մեզ կյանք ու սնունդ են տվել դարեր շարունակ:

Սույն հանրագրի ներկայացման համար հիմք են հանդիսացել հետևյալ իրավական դրույթները.

1) ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

2) ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

3) ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»: Սահմանադրական սույն սկզբունքը սերտորեն և անխզելիորեն կապված է անձի առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի հետ:

4) ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

5) ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքն ունի հողի, ինչպես նաև գույքի նկատմամբ սեփականության իրավունք»:

6) ՀՀ-ի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ հանրությունը կոնկրետ գործունեության տեսակների պարագայում մասնակցում է որոշումների կայացման գործընթացին:

7) «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կոլեկտիվ հանրագիր ներկայացնելու իրավունք, մինչև 14 տարեկան անձինք՝ օրինական ներկայացուցչի միջոցով:

8) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունն ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները, և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում»:

Ելնելով վերոնշյալից՝ մենք՝ Եղեգնաձոր համայնքի բնակիչներս, խնդրում և պահանջում ենք.

- **ընդունել որոշում, որով կարգելվի և ապագայում կբացառվի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում և ընդհանուր առմամբ Վայոց ձորի մարզում իրականացնել մետաղական հանքարդյունաբերության հետ կապված հետախուզական, առավել ևս հանքավայրերի շահագործման հետ կապված աշխատանքներ:**
- **Համայնքների անդամներին ներգրավելով՝ մշակել Եղեգնաձոր քաղաքի ու Վայոց ձորի մարզի Էկոլոգիապես կենսակայուն և կանաչ տնտեսության զարգացման համալիր ծրագիր, որի իրականացման համար մենք պատրաստ ենք աջակցել ՀՀ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին:**

Այս կոլեկտիվ հանրագիրը նախաձեռնելու և ներկայացնելու համար լիազորված է

(անուն, հասցե, հեռախոս , Էլ.փոստ)

ՀՀ կառավարությանը, Եղեգևաձոր համայնքի ավագանուն և ղեկավարին

Եղեգևաձոր համայնքը Էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու վերաբերյալ հանրագրի մասնակիցներ

N	Անուն, ազգանուն	Հասցե	Հեռախոս	Ստորագրություն	Համաձայն եմ, որ հանրագիրը հրապարակվի (այո/ոչ)
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					
11.					
12.					
13.					
14.					
15.					
16.					
17.					
18.					
19.					
20.					